ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# Հայաստանի Հանրապետության 2017թ. խոշորացվող համայնքների նկարագրություն

# ԱԽԹԱԼԱ

## համայնք

**(ք. Ախթալա, գ. Ախթալա, Առողջարանին կից, Բենդիկ, Ճոճկան, Մեծ Այրում, Փոքր Այրում, Նեղոց և Շամլուղ բնակավայրեր)**

Հեղինակ՝ Սարգիս Թովմասյան

Երևան – 2017

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔ

Ախթալա խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է Ախթալա քաղաքը (համայնքի կենտրոն)՝ նախկինում դրա կազմում գտնվող Առողջարանին կից գյուղով, Շամլուղ քաղաքը (Բենդիկ և Ախթալա գյուղերով), Մեծ Այրում (Փոքր Այրում գյուղով), Ճոճկան և Նեղոց գյուղերը:

Համայնքի կազմավորումը նպատակ ունի Լոռու մարզի հյուսիս-արևելյան հատվածում կազմավորել տարաբնակեցման համակարգի նոր տեղային կենտրոն՝ քաղաքի շուրջ համախմբելով պատմականորեն քաղաքի հետ կապված բնակավայրերը, ինչը թույլ կտա դրանց բնակչության համար ապահովել հանրային ծառայությունների մատուցման ավելի բարձր մակարդակ:

Համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 6422 մարդ, վարչական տարածքը կազմում է 5822 հա:

**Փնջի ընդհանուր նկարագիրը**

Համայնքի բնակավայրերը գտնվում են Վիրահայոց և Գուգարաց լեռների միջակայքում, Դեբետի ավազանի լեռնանտառային գոտում՝ ծովի մակերևույթից 650մ-ից (Նեղոց) մինչև 1250մ (Բենդիկ) բարձրությունների վրա: Ըստ այդմ, ցածրադիր գոտիներում կլիման մերձարևադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով, իսկ համեմատաբար բարձրադիր հատվածներում բարեխառն լեռնային է՝ տևական, ցուրտ ձմեռներով, տաք և համեմատաբար խոնավ ամառներով: Տարեկան թափվում են 500-600մմ մթնոլորտային տեղումներ:

Ախթալայի և Շամլուղի բնակչության զբաղվածության հիմնական ուղղությունը լեռնահանքային արդյունաբերությունն է՝ բազմամետաղների հանքահարստացումը (պղինձ, արծաթ, կապար): Ախթալան ունի նաև սննդի արդյունաբերության՝ հացի, կաթնամթերքի գործարաններ: Շամլուղում կան կավի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն և արդյունահանվում են:

Գյուղական բնակավայրերի բնակչությունը զբաղվում է նաև բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ:

Տարածաշրջանն առանձնանում է նաև պատմականորեն ձևավորված՝ տարբեր ազգությունների (հայեր, վրացիներ, ֆրանսիացիներ, հույներ, ռուսներ) մշակույթների, կենցաղի և սովորությունների համակեցության ավանդույթներով, ինչը կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել էթնոտուրիզմի զարգացման համար: Պատմաճարտարապետական արժեքավոր հուշարձանների առկայությունը նաև մշակութային տուրիզմի զարգացում է ենթադրում:

Համայնքի բնակավայրերի հիմնախնդիրների մեջ կարևորվում են ներբնակավայրային ճանապարհների, դպրոցների և դպրոցական գույքի, ոռոգման և խմելու ջրագծերի վերանորոգումը: Էական է դիտարկվում նաև ջրային և օդային ավազանների բնապահպանական հիմնախնդիրների լուծումը:

***Համայնքի փվյալների համադրում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգով» սահմանված՝ խոշոր համայնքի փեսլական պայմանների և խոշորացման չափորոշիչների հետ***

*1. Տեսլականով սահմանված՝ բավարար մարդկային ռեսուրսների պայման և խոշորացման չափորոշիչներից՝ առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոնի առկայություն.*

Համայնքի կազմում ամենախոշոր բնակավայրը Ճոճկան գյուղն է՝ բնակչության 2142 թվաքանակով (Աղյուսակ 1): Այսուհանդերձ, ավելի հիմնավորված է որպես խոշորացվող համայնքի կենտրոն նախատեսել Ախթալա քաղաքը՝ նկատի ունենալով ինչպես դրա կենտրոնական դիրքը մնացած բնակավայրերի նկատմամբ, այնպես էլ հանրային ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ավելի մեծ շրջանակի առկայությունը:

Մտահոգիչ է համայնքի կենտրոնի բնակչության շարժընթացի պատկերը. այն 2001-2016թ.թ. պակասել է 16 տոկոսով: Համայնքի կազմում ընդգրկվող 3 գյուղերի (Առողջարանին կից, գ. Ախթալա և Բենդիկ) բնակչության թվականակը ևս խնդրահարույց է (համապատասխանաբար 14, 2 և 65): Ընդհանուր առմամբ, համայնքի կազմում մտնող բնակավայրերի բնակչությունը նշված ժամանակահատվածում ավելացել է ընդամենը մեկ տոկոսով, ինչը գործնականում հետընթաց է նշանակում:

Բնակչության խտության ցուցանիշը խոշորացվող համայնքում մոտ է հանրապետության միջին ցուցանիշին և կազմում է 101մարդ/քառ.կմ:

*Ծանոթություն.Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Առողջարանին կից գյուղը նախկին Ախթալա համայնքի կազմում է եղել, Բենդիկ և Ախթալա գյուղերը՝ Շամլուղ համայնքի, Փոքր Այրումը՝ Մեծ Այրումի, բնակչության խտության ցուցանիշը, ինչպես նաև հետագա բաժիններում ներկայացված առանձին ցուցանիշներ հաշվարկված են նախկին համայնքների կտրվածքով:*

Աղյուսակ 1. Ախթալա խոշորացվող համայնքի բնակչության շարժընթացը և խտությունը

| | Համայնք (բնակավայր) | Վարչական տարածքը /հա/ | Հաշվառված բնակչություն | | բնակչ.փոփոխութ. Տոկոս | Բնակչության խտությունը/մարդ/քառ.կմ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2001թ. | 2016թ. | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Ախթալա | 1890 | 2435 | 2050 | 84 | 108 |
| 2 | Առողջարանին կից | | 21 | 14 | 67 | |
| 3 | Շամլուղ | 580 | 882 | 655 | 74 | 113 |
| 4 | գ.Ախթալա | | | 2 | | |
| 5 | Բենդիկ | | | 65 | | |
| 6 | Ճոճկան | 1945 | 1907 | 2142 | 112 | 110 |
| 7 | Մեծ Այրում | 1019 | 638 | 913 | 143 | 90 |

| 8 | Փոքր Այրում | | 170 | 270 | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9 | Նեղոց | 388 | 320 | 311 | 97 | 80 |
| | Ընդամ./միջին | 5822 | 6373 | 6422 | 101 | 101 |

*<u>2. Տեսլականով սահմանված՝ բավարար բնական ռեսուրսներով ապահովված լինելու պայման</u>*

Մեկ բնակչի հաշվով քաղաքացիների և համայնքային սեփականության գյուղատնտեսական հողերի ամենամեծ ծավալները նախկին Ճոճկան և Մեծ Այրում համայնքներում են՝ համապատասխանաբար 0,74 և 0,80 հա (Աղյուսակ 2)։ Խոշորացվող համայնքում այդ ցուցանիշի միջին ծավալը կազմում է 0,42 հեկտար, ինչն ավելի քան 2 անգամ պակաս է հանրապետության միջին ցուցանիշից։ Եթե նույնիսկ հաշվի չառնենք Ախթալա քաղաքի տվյալները, որտեղ հողերի սեփականաշնորհում չի իրականացվել և բացակայում են քաղաքացիների սեփականության գյուղատնտեսական հողերը, ապա մնացած համայնքներում քաղաքացիների սեփականության հողերը մեկ բնակչի հաշվով կկազմեն 0,25հա, համայնքայինը՝ 0,36 հա, և դրանց գումարը նույնպես պակաս կլինի հանրապետության միջին ցուցանիշից։

Համայնքում շատ չեն նաև պետական սեփականության գյուղատնտեսական հողերը՝ ընդամենը 112 հա։

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական, հատուկ պահպանվող տարածքների, անտառային և արդյունաբերական նշանակության հողերը Ախթալա խոշորացվող համայնքում

| | Համայնք (բնակավայր) | Հաշվառված բնակչություն 2016թ. | Գյուղատնտեսական հողեր /հա/ | | | | | | | | Հատուկ պահպանվող տարածքներ | Անտառային ֆոնդի հողեր | Արդյունաբերության, ընդերք. և այլ նշանակության |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Քաղաքացիների սեփականություն | որից | | Համայնքի սեփականություն | Պետական սեփականություն | 1 բնակչի հաշվով | | | | | |
| | | | | Բազմամյա տնկարկ | Վարելահող | | | Քաղաքացիների սեփականություն | Համայնքի սեփականություն | Ընդամենը | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 13 | 14 | 15 |
| 1 | Ախթալա | 2050 | 0 | 0 | 0 | 12 | 3 | 0,00 | 0,01 | 0,01 | 37,1 | 1657,8 | 31,8 |
| 2 | Առողջարանին կից | 14 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 3 | Շամլուղ | 655 | 74 | 0 | 0 | 90 | 0 | 0,11 | 0,14 | 0,25 | 2,6 | 194,1 | 6,9 |
| 4 | գ.Ախթալա | 2 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 5 | Բենդիկ | 65 | 0 | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 6 | Ճոճկան | 2142 | 736 | 75 | 660 | 849 | 74 | 0,34 | 0,40 | 0,74 | 4,7 | 2250,5 | 44,4 |
| 7 | Մեծ Այրում | 913 | 244 | 68 | 176 | 490 | 5 | 0,27 | 0,54 | 0,80 | 2,6 | 1069,0 | 29,8 |
| 8 | Փոքր Այրում | 270 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 9 | Նեղոց | 311 | 36 | 0 | 21 | 152 | 30 | 0,11 | 0,49 | 0,60 | 10,5 | 1210,1 | 11,0 |
| | Ընդամ./միջին | 6422 | 1089 | 143 | 857 | 1592 | 112 | 0,17 | 0,25 | 0,42 | 57,4 | 6381,5 | 123,9 |

Ի հակակշիռ գյուղատնտեսական նշանակության հողերի, համայնքում զգալի ծավալ են կազմում անտառային ֆոնդի հողերը՝ ավելի քան 6,3 հազար հեկտար, որոնք գրեթե հավասարաչափ բաշխված են նախկին բոլոր համայնքներում:

Արտադրական նշանակության հողերը հիմնականում գտնվում են Ախթալա քաղաքում, Ճոճկան և Մեծ Այրում գյուղերում, և դրանց գերակշիռ մասն օգտագործվում է ընդերքի արդյունահանման նպատակներով:

*<u>3. Համայնքների խոշորացման փեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայման</u>*

Խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվող նախկին համայնքներից սեփական եկամուտները մեկ բնակչի հաշվով հանրապետության միջին ցուցանիշից բարձր են Ախթալայում, Ճոճկանում և Մեծ Այրումում, այսուհանդերձ, խոշորացվող համայնքի միջին ցուցանիշը փոքր-ինչ պակաս է հանրապետության միջինից (Աղյուսակ 3):

Նկատի ունենալով համայնքների սեփական եկամուտների աղբյուրների շրջանակը, դժվար չէ ենթադրել, որ Ախթալա համայնքում դրանց համեմատաբար ցածր մակարդակը պայմանավորված է տնտեսական շրջանառության մեջ գտնվող հողային ռեուրսների սակավությամբ:

Աղյուսակ 3. Սեփական եկամուտների ծավալները Ախթալա համայնքում

| | Համայնք (բնակավայր) | Հաշվառված բնակչություն, 2016 թ. | Սեփական եկամուտ | |
|---|---|---|---|---|
| | | | 2013-2015թ.թ. տարեկան միջին /հազ.դրամ | 1 բնակչի հաշվով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ախթալա | 2050 | 15372 | 7,5 |
| 2 | Առողջարանին կից | 14 | | |
| 3 | Շամլուղ | 655 | 3769 | 5,8 |
| 4 | գ.Ախթալա | 2 | | |
| 5 | Բենդիկ | 65 | | |
| 6 | Ճոճկան | 2142 | 16358 | 7,6 |
| 7 | Մեծ Այրում | 913 | 7846 | 8,6 |
| 8 | Փոքր Այրում | 270 | | |
| 9 | Նեղոց | 311 | 1294 | 4,2 |
| | Ընդամ./միջին | 6422 | 44639 | 6,7 |

*<u>4. Բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև տրանսպորտային կապերը և ավտոմոբիլային ճանապարհների վիճակը</u>*

Աղյուսակ 4-ում ներկայացված է Ախթալա համայնքում տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակի ընդհանուր պատկերը:

Աղյուսակ 4. Տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակը Ախթալա համայնքում

| | Համայնք (բնակավայր) | Բարձրությունը ծովի մակերևույթից | հեռավորությունը համ.կենտրոնից | | Հասանելիության ցուցիչ | Ճանապարհի վիճակը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կմ | րոպե | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Ախթալա | 740 | 65,1* | 155 | | |
| 2 | Առողջարանին կից | 740 | | | Բարենպաստ | Բավարար |
| 3 | Շամլուղ | 1100 | 8,6 | 22 | Սահմ.բարենպաստ | Հիմնանոր.կարիք |
| 4 | գ.Ախթալա | 1220 | 14,2 | 34 | Անբարենպաստ | Հիմնանոր.կարիք |
| 5 | Բենդիկ | 1250 | 12,6 | 31 | Անբարենպաստ | Հիմնանոր.կարիք |
| 6 | Ճոճկան | 724 | 12,6 | 22 | Սահմ.բարենպաստ | Բավարար |
| 7 | Մեծ Այրում | 780 | 8,2 | 15 | Բարենպաստ | Բավարար |
| 8 | Փոքր Այրում | 725 | 5,5 | 13 | Բարենպաստ | Բավարար |
| 9 | Նեղոց | 650 | 5 | 11 | Բարենպաստ | Բավարար |

**Հեռավորությունը մարզկենտրոնից*

Բերված տվյալները ցույց են տալիս, որ համայնքի կազմում ընդգրկվող բնակավայրերից 4-ը գտնվում են համայնքի կենտրոնից բարենպաստ հասանելիության տիրույթում, 2-ը՝ սահմանափակ բարենպաստության և 2-ը՝ անբարենպաստ հասանելիության տիրույթում:

Սակայն երբ դիտարկում ենք բնակավայրերից մինչև համայնքի կենտրոն եղած հեռավորությունը, ապա դրանք ավելի պակաս են, քան խոշորացման չափորոշիչներով սահմանված քսան կիլոմետրը:

Մասնավորապես, մինչև Բենդիկ և Ախթալա գյուղերը եղած՝ համապատասխանաբար 12,6 և 14,2 կիլոմետր հեռավորությունը, բարվոք ճանապարհների պարագայում (նույնիսկ լեռնային գոտում), կարելի է անցնել շատ ավելի կարճ ժամանակահատվածում, քան ճանապարհների ներկա վիճակով: Ուստի, ավտոմայրուղիների հիմնանորոգման պարագայում համայնքի կազմում գտնվող բոլոր բնակավայրերի համար հասանելիության ցուցիչը բավարար մակարդակի վրա կլինի:

*<u>5. Կրթական, առողջապահության և մշակութային ենթակառուցվածքներ</u>*

Ախթալայում գործում է բավարար վիճակում գտնվող 3 մանկապարտեզ՝ 30-ական տեղով, որոնցից 2-ն աշխատում են լրիվ բեռնվածքով, 1-ը՝ կիսով չափ: Ընթացիկ նորոգման կարիք ունեցող, 60 երեխայի համար նախատեսված և նույնքան երեխայով մանկապարտեզ ունի Ճոճկանը: Մեծ Այրումն ունի բավարար վիճակում գտնվող, 65 տեղով (25 փաստացի երեխայով) մանկապարտեզ: Համայնքի մնացած բնակավայրերում մանկապարտեզներ չկան:

Ախթալա համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունները բաշխված են հետևյալ կերպ.

1. ք.Ախթալան ունի ընթացիկ նորոգման կարիք ունեցող 2 միջնակարգ դպրոց.

- 500 աշակերտի համար նախատեսված և 140 փաստացի աշակերտով,

- 80 աշակերտի համար նախատեսված և 20 փաստացի աշակերտով,

2. Շամլուղն ունի հիմնանորոգման կարիք ունեցող միջնակարգ դպրոց (400 աշակերտի համար նախատեսված և 120 փաստացի աշակերտով),

3. Ճոճկանն ունի ընթացիկ նորոգման կարիք ունեցող միջնակարգ դպրոց (350 աշակերտի համար նախատեսված և 175 փաստացի աշակերտով),

4. Մեծ Այրումն ունի հիմնանորոգման կարիք ունեցող միջնակարգ դպրոց (400 աշակերտի համար նախատեսված և 126 փաստացի աշակերտով),

5. Նեղոցն ունի 150 աշակերի համար նախատեսված և 52 աշակերտով հիմնական դպրոց, որն ունի ընթացիկ նորոգման կարիք:

Բերված թվերը ցույց են տալիս, որ համայնքի բնակավայրերի կրթական հաստատությունները թերբեռնված են աշխատում:

Ախթալան ունի նաև բավարար վիճակում գտնվող՝ 80 աշակերտի համար նախատեսված և 50 աշակերտով գեղարվեստի դպրոց, բավարար վիճակում գտնվող՝ 300 տեղանոց մշակույթի տուն և հիմնանորոգման կարիք ունեցող, 250 տեղանոց ակումբ:

Շամլուղն ունի հիմնանորոգման կարիք ունեցող 2 մշակույթի տուն՝ 300 և 120 տեղով: Հիմնանորոգման կարիք ունեցող մշակույթի տներ ունեն նաև Ճոճկանը և Մեծ Այրումը (համապատասխանաբար 200 և 100 տեղով):

Առողջապահական հաստատությունները համայնքի բնակավայրերում հետևյալ բաշխվածությունն ունեն՝

1. Ախթալան ունի բավարար վիճակում գտնվող ամբուլատորիա,

2. Շամլուղն ունի հիմնանորոգման կարիք ունեցող 2 ամբուլատորիա,

3. Ճոճկանն ունի ընթացիկ նորոգման կարիք ունեցող ամբուլատորիա,

4. Մեծ Այրումն ունի հիմնանորոգման կարիք ունեցող բուժկետ,

5. Նեղոցն ունի բավարար վիճակում գտնվող բուժկետ:

Ընդհանուր առմամբ, խոշորացվող համայնքում կրթական, մշակութային և առողջապահական օբյեկտներով ապահովվածությունը հիմնականում բավարար մակարդակի վրա է, այսուհանդերձ ցանկալի է Ախթալայում տեսանելի ապագայում նախատեսել հիվանդանոցի կառուցում:

Կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների տարածքային տեղաբաշխումը համայնքի գյուղերում ներկայացված է քարտեզի վրա:




*Հապավումներ..-Ա-Ամբուլատորիա, ԲԿ-Բուժկետ, ՄՏ-Մշակույթի տուն, ԱԿ-Ակումբ, ՄՊ-Մանկապարտեզ, ՀԴ-Հիմնական դպրոց, ՄԴ-Միջնակարգ դպրոց, ԳԴ-Գեղարվեստի դպրոց*

Համայնքների խոշորացման չափորոշիչներով և խոշոր համայնքի տեսլականով սահմանված պահանջների ընդհանրացված գնահատականները Ախթալա համայնքի համար ներկայացված են 5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 5. Ախթալա համայնքի խոշորացման պայմանների և չափորոշիչների ամփոփ գնահատական

| | **Խոշորացման պայմաններ և չափորոշիչներ** | **Ցուցանիշի գնահատական** | **Ծանոթություն** |
|---|---|---|---|
| 1 | Բավարար մարդկային ռեսուրսներ և առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոն | Բավարար չէ | |
| 2 | Բավարար բնական /հողային/ ռեսուրսների առկայություն | Բավարար չեն գյուղ. նշանակության հողերը | Համայնքում կան անտառային ֆոնդի հողերի շրջափելի ծավալներ |
| 3 | Ֆինանսական ռեսուրսների առկայություն | Բավարար չէ հանրապետության միջին ցուցանիշից զգալիորեն պակաս է | |
| 4 | Տրանսպորտային կապեր | Հիմնականում բավարար է | |
| 5 | Ավտոճանապարհների վիճակ | Բավարար չէ | Ճանապարհների հիմնանորոգման կամ ընթացիկ նորոգման կարիք կա |
| 6 | Նախադպրոցական հիմնարկներ | Բավարար է | |
| 7 | Կրթական հաստատություններ | Բավարար է | Դպրոցներն ունեն ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք |
| 8 | Առողջապահության օբյեկտներ | Հիմնականում բավարար է | Ցանկալի է նախատեսել հիվանդանոցի կառուցում Ախթալայում |
| 9 | Մշակութային օբյեկտներ | Բավարար է | Որոշ օբյեկտներ նորոգման կարիք ունեն |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | Ընդհանուր սահմանի առկայություն | Առկա են | |
| 11 | Համայնքի կենտրոնի կենտրոնական դիրք | Բավարար է | |
| 12 | Բնակիչների համատեղելիություն և մենթալություն | Բավարար է | |

Այսպիսով, ընտրված 12 պայմաններից և չափանիշներից Ալավերդի խոշորացված համայնքը լիարժեքորեն բավարարում է 7-ին, մասնակիորեն՝ 2-ին:

Հիմնական շեղումներն են՝

➢ Համայնքի կենտրոնի բնակչության թիվը պակաս է խոշորացման չափորոշիչներով սահմանված նվազագույն թվից,

➢ գյուղատնտեսական հողերի սակավությունը,

➢ սեփական եկամուտների միջինացված ցուցանիշը պակաս է հանրապետության գյուղական համայնքների համարժեք միջին ցուցանիշից (այս ցուցանիշի բավարարության մակարդակը պայմանական բնույթ ունի, ուստի այն կարելի է անտեսել),

➢ տրանսպորտային կապերը (հասանելիություն) և ճանապարհների վիճակը:

***Որպես առկա շեղումները չեզոքացնելու, ինչպես նաև համայնքի զարգացմանը նպաստող հիմնական միջոցառումներ պետք է դիտարկել՝***

➢ Ախթալա քաղաքում հանրային ծառայությունների ամբողջական շրջանակի պակսող օղակների լրացումը, ինչը թույլ կտա բարելավել կյանքի որակը և կասեցնել բնակչության արտահոսքը,

➢ Միջբնակավայրային ավտոմոբիլային ճանապարհների արդիականացումը և հիմնանորոգումը,

➢ կրթական, առողջապահական և մշակութային հաստատությունների ընթացիկ կամ հիմնանորոգման աշխատանքների իրականացումը,

➢ *գյուղատնտեսակն հողերի սակավության գործոնը չեզոքացնելու համար կարող է քննարկման առարկա դառնալ խոշորացվող համայնքի վարչական տարածքում գտնվող անտառային ֆոնդի առանձին հատվածներ պիլոտային ծրագրերի միջոցով սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու համար օրենսդրական հիմքերի ստեղծման հարցը:*

***Ախթալա համայնքի կազմավորումը կարող է ապահովել համայնքների խոշորացման հայեցակարգում ամրագրված հետևյալ հիմնական արդյունքները՝***

1. Լոռու մարզի հյուսիսային հատվածում տարաբնակեցման համակարգի նոր տեղային կենտրոնի կազմավորումը, ինչը նախադրյալներ կստեղծի բնակավայրերի կայուն զարգացման համար,

2. Մարդկային ռեսուրսների համախմբումը, ինչը թույլ կտա բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը (որակյալ կադրեր, ընդլայնված կառավարման օբյեկտ, և այլն),

3. Ենթակառուցվածքների համախմբումը, ծառայությունների մատուցման հասանելության ապահովումը և արդյունավետության բարձրացումը, ինչը թույլ կտա կենտրոնացնել բնական

ռեսուրսները և դրանց կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից, մշակել և իրականացնել համայնքային քաղաքականություն, որը փոքր համայնքներից շատերում բացակայում է,

4. Միավոր ծառայության վրա կատարվող ծախսերի նվազեցումը և ծառայությունների շրջանակի ընդլայնումը,

5. Ենթակառուցվածքների զարգացման և արդիականացման (ճանապարհային ցանց, կրթական, առողջապահական, մշակութային հաստատություններ և այլն) գծով ներդրվող գումարների առավել նպատակային և կենտրոնացված օգտագործումը,

6. Համապետական ծրագրերի իրականացման հնարավորությունների մեծացումը, այդ թվում՝ զբոսաշրջության զարգացման և շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ,

7. Տնտեսության ճյուղերի՝ հատկապես օգտակար հանածոների արդյունահանման և գյուղատնտեսության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծումը,

8. Բնական պաշարների հասանելիությունը և դրանցից օգտվելու հնարավորության ապահովումը գործնականում բոլոր բնակավայրերի բնակիչների համար:

Նկատի ունենալով համայնքի տարածքում պատմամշակութային արժեքավոր հուշարձանների մեծ թիվը, ինչպես նաև պատմականորեն ձևավորված՝ տարբեր ազգությունների մշակութային ու կենցաղային համակեցության առկայությունը՝ համայնքի զարգացմանը նպաստող էական գործոններ կարող են դիտարկվել մշակութային տուրիզմը և էթնոտուրիզմը: Այդ նպատակին կարող են ծառայել անհրաժեշտ ենթակառուցվածքների տեղաբաշխմանն ուղղված ներդրումային ծրագրերի մշակումն ու իրականացումը, մասնավորապես, արդեն իսկ մշակման փուլում գտնվող՝ Ախթալայում հայկական, ֆրանսիական, հունական, ռուսական և վրացական թաղամասերի ստեղծման ծրագիրը:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**

Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝  www.giz.de